# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2013թ. թիվ 103-Ա

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետի «դ» ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու» կարգի 4-րդ մասի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Քաղաքաշինության բնագավառում Լոռու մարզի համայնքների ղեկավարների գործունեությունը վերահսկելու նպատակով պլանային ստուգումներ անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել ստուգումների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն թիվ 2 հավելվածի և առաջադրանքները՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Հանձնաժողովին՝

Յուրաքանչյուր ստուգման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրություններին 3-օրյա ժամկետում տալ համապատասխան ընթացք:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. հունիսի 21
ք.Վանաձոր